

COUTAN: REVUE D'AGRICULTURE, SCIENCES ET ARTS  
(SOUS LE PATRONAGE DE M. E. DUCLAUX)

# ԳՈՒԹԱՆ

ՀՈՂԱԳՈՐԾԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ, ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ


Հ Ա Ն Դ Է Ս

Ա. ՏԱՐԻ

Թի 4

1901

Փ Ա Ր Ի Ջ



Երբ. գութան, գորի գութան,  
Արն Եկել է ճաշ գտանել,  
Ուր շուտ ատր, խոփիտ զգութան  
Յոջեալ է Աստուած հորով'ը:  
Գաշիք էդ, ասիտ Տատաղ,  
Գաշի'ր, բաշեք - վար անենք  
Զոյան արա', քչիք հասաղ,  
Են՞ ան՞ արին ճար անենք:

ՅՈՎ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Հ Ի Մ Ն Ա Դ Ի Բ - Տ Ն Յ Ր Է Ն

ԳԱՐԵԳԻՆ ՄԵԾԱՏՈՒՐԵԱՆ

Secrétaire: PAUL GÉRÉE

Directeur: K. MÉZADOURIAN,

Rédaction: 53, Rue Boulard, PARIS (14<sup>e</sup>)

## Բ. ՇՐՋԱՆ

Գուքանի Բ. Շրջանին պիտի մխիթեմք, բայց ԿԱՆՆԻԿ ԲԱԺՆԵՒՆՈՎ .

Այս թուով կը վճարենք մեր բոլոր պարտքերը եւ պահանջներս կը խոչորցնենք :

Մեր վճարող բաժանորդներուն զգացածցաւերնիս կը յայտնենք որ փոխանակ մէկի երկու տարիէն կը ցտնք բոլորել շրջաննիս . բոլոր պատասխանատուութիւնը բնական է կիցնայ չի վճարողներու վրայ, որոնք մեզի աւելորդ ծախսերու ենթարկեցին. ամեն գոհողութեամբ պիտի շարունակենք մեր գործը :

Մեր հին բաժնեգիւնները, մեր յուսուեցնել եւ կը պահանջեմք :

Բ. Շրջանի Ա. թիւին մէջ պիտի արձանագրենք Մանչէսթէրի Մեծանպատիւ աղաներու խոչոր անուաները, որոնք լրբապէս, լկատրէն եւ սրիկայաբար կերան ԳՈՒԹՈՒՆԻ արդար իրաւունքը . կը տեսնուի թէ այն «Հէրկէլէներու սիւրի» ին մէջ Բարեգործ անուանը վայրողներ ալ կան :

Պիտի հրատարակենք նաեւ չի վճարող Սուրբ գաղաններու, չարպետներու, Նսեմաշուքերու անուններն ալ .

Charues à Vapnur

Locomotives à Vapeur

Camions à Vapeur

Tombeaux Routières

Rouleaux des Routes à vapeur

Շոգեշարժ սրորներ

Պոզսակերու շոգեշարժներ

Շոգեշարժ սայլակներ

Շոգեշարժ ցած սայլակներ

Պոզսակերու շոգեշարժ յողեր

De construction parfaite et d'une solidité à toute épreuve, sont livrés à des prix excessivement réduits par

John Fowler & Cie.

MAGDEBOURG

(Alemagne)

Փորձուած տոկունութեամբ եւ ընտիր շէնքով, կը գրկուին ամենաաժան գներով Գերմանիոյ Մատչպուրկի ԺՕՆ ՖՕՎԼԷՐ Ընկերութեան կողմէն :



## ՀՈՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄԸ ԳԻՒՂԵՐՈՒ ՄԷՋ

Ինչոր անոնք, որ կը հետաքրքրուին հետուէն կամ մտէն դիւզական հասարակութիւնով եւ կը դաւալին անոր կեանքը բարեխաւելու ու անոր զանազան աշխատութիւններ թեթեւցնելու միջոցներ գտնել, կընդունին թէ՛ հողագործական ուսումները օգտակար եւ անհրաժեշտ են նոյն իսկ նախակրթարան վարժարաններու մէջ :

Այս հարցի ուսումնասիրութիւնը շատ դժուար է, որովհետեւ կը շահադրուէ նախնական ուսման բոլոր աստիճանները, ըլլալ նախակրթական, ըլլալ բարձրագոյն նախակրթարան, վերջապէս ըլլալ Ազգ. վարժարանները :

### ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ

Երկրագործական ուսումը նախակրթարաններու մէջ մտնաւանդ՝ պէտք է ըլլալ երկրագործի արուեստին նախնական պարտաւորութիւն մը . ասոր համար պէտք է ազոց ցոյց տալ այն շահը, որ պէտք է հանել իրենց պատարուած հողագործական գիտութիւններու ընդհանուր ծանօթութիւններէն :

Այս պարագային, հողագործութեան գասր պարտի յենուլ պարզ փորձերու, բոցսերու վերաբերութեամբ, ծլելու, հասիկներու ծլելու կարողութեաններու, արմատներու, ցոլունի, տերեւներու եւ այլնի պաշտօններուն վրայ :

Ուսուցիչը իր գասերը աւելի համելի եւ մատչելի ընելու համար այս մատղաջ ուղեղներուն, պէտք է կազմակերպէ գլորոցական պտոյտներ, զաշտերու եւ ագարակներու այցելութիւններ . հաստատէ վարժարանին մէջ փոքրիկ թանգարան մը պահելու համար հոն մեջաաներու, բոյսերու, ժայռերու հաւաքածոյները եւ հողերու նմոյշները :

Մեր այս խօսքերը 10 — 12 տարեկան սոցոց համար է, ասոր համար պէտք է գոհանալ բոյսերու ինչպէս ծլելը, անելը եւ բազմանալը ցոյց տուող պարզ փորձերով :

Ուսուցչին համար շատ մը գասերու առարկայ պէտքէ ըլլայ ազբի տրուելիք խնամքը :

Այս փոքրիկներուն պէտքէ յաճախ կրկնել, որ ազբա-  
ջուրը (մէջ) ազբի պիտաւոր տարրն է եւ առանց անոր այս  
վերջինը գրեթէ արժէք չունի :

Վերջապէս, ուսուցիչը պարտի իր բոլոր ճիշդ թափել  
ներշնչելու համար իր աշակերաններուն դաշտային կեանքի  
ճաշակը. որպէս զի սիրով կապուին անոնք գիւղերու եւ  
վերջը չերթան հաստատուել քաղաքներու. կամ օտարու-  
թեան մէջ :

Գոտագրքերու մասին պիտի խօսինք այս յոգուածի  
վերջը. միայն այս քանը պիտի ըսենք հիմա թէ՛ ամէն կլիմայի  
կամ երկրի վարժարաններու մէջ ընդհանուր ծանօթութիւն-  
ները կրնան անխտիր եւ հաւասարապէս դասախօսուել. իսկ  
մասնաւոր ծանօթութիւնները պէտքէ՝ երկրի պէտքի ու  
համաձայն ուսուցուին, հիւսիւտային երկրի մը մէջ հարա-  
ւային երկիրներու մշակութեանց վրայ եթէ խոսուի, ազոց  
ժամանակը կորսնցնել առէ զատ ուրիշ օգուածը չի ստաց-  
ուիր, հարաւային երկրի մը մէջ պէտք է դասախօսուի  
օրինակի համար Թիւրքի, Այդիի, Բամպակի մշակութեան  
վրայ փոխանակ Բանջարի կամ արմտիքի :

Որպէս զի հողագործական ուսումը գործնական եւ փոր-  
ձառական ըլլայ, պէտքէ սորվեցնել տեղական եւ դաւառային  
երկրագործութիւնը, առոր համար ալ պէտքեն մեզ համար  
մասնաւոր գրքեր, իւրաքանչիւր դաւառի պահանջներուն  
համապատասխանող :

#### ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ

Ալ հոս աշակերտը պարտի վարժուիլ արուեստին. արդէն  
խելամուտ ըլլալով հողագործական, բնագիտական, բնական  
գիտութեանց տարբական ծանօթութեանց, կրնայ ստանալ  
բոլորովին գիտական ուսումներ եւ ամբողջացնել անոնք  
հողագործական ձեռքական աշխատութիւններով :

Այս հաստատութեան համար անհրաժեշտ է փորձառական  
դաշար, սրուն բոլոր աշխատութիւնները պէտքէ կատար-  
ուին աշակերտներու ձեռքով :

Աւելի նպատակայարմար է, եթէ փորձառական դաշար  
տեղ հողը բաժնուի աշակերտներու մէջ, որպէս զի իւրա-  
քանջիւրը իր փոքրիկ պարտէզը ունենայ :

Գործնական այս քայլով ճշմարիտ բարինախանձը եւ նախաձեռնարկութիւնը պիտի արթննայ աշակերտներու մէջ եւ այս միջոցով կարելի պիտի ըլլայ իւրաքանչիւրի կարողութիւնը գնահատել :

Մէկ խօսքով, այս վարժարաններու մէջ կարելի է լաւ պայմաններով դասախօսել հողագործական ծանօթութիւնները :

Դասադրքերու մասին սուանձին պիտի խօսինք, ըսենք սակայն, պէտք չէ միայն սկզբունքներ սորվեցնելով գոհանալ, այլ կարելի եղած չափով բազմաթիւ փորձերով, գործնականապէս ասպցուցանել արուած ծանօթութիւնները :

Այս վարժարաններու մէջ ալ տեղական եւ գաւառական երկրագործութիւնը սորվեցնել պէտք է, գործնական արգիւնքներ ձեռք բերելու համար :

#### Ա.ԶԳ. ՎՍՐԺՍՐԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ

Մեր երկրորդական վարժարաններէն կելլեն ընդհանրապէս մեր գաւառային եւ գիւղական ուսուցիչները, առիջգոյ՛է վարժապետանոյներու :

Հողագործական դասին այս հաստատութեան մէջ պէտքէ տրուի գիտութեան եւ գրականութեան կարեւորութիւնը :

Ուրիշ առթիւ մը մանրամասնօրէն պիտի գրենք այս հարցին վրայ, սակայն առայժմ պէտքէ ըսենք թէ՛

Մեր երկրորդական վարժարաններու մէջ ընդհանրապէս քիչ շատ կարող ուսուցիչներ կը դասախօսեն եւ աշակերտները աւելի առատ դիտական պաշար ունին, հետեւաբար կարելի է սալ ստոնց արգիւնատու, ընդարձակ, գործնական եւ տեսական ծանօթութիւններ, որպէս զի սպազային երբ կոչուին գիւղական եւ գաւառական վարժարաններու ուսուցչութեան, երթան հոն Հողագործական գիտութեանց պաշարով :

Մեր հասարակութեան ամենամեծ դասը գիւղացիներէ կազմուած է. ներկայ դրութեան հրամայածը պէտքէ ընել, այսինքն անոնց պէտքերուն յատուկ եւ համապատասխանող ուսումներ սալ :

Մեր գիւղացին խեղճ, թշուտ եւ զրկուած է, կրթինք պայն, հարստացնենք ու սիրենք. ան ժողովուրդներու մայրն է եւ մեծ ու երջանիկ ապագան :

Գ. ՄԵՇԱՏՈՒՐԵԱՆ



## ԿԱՐԱԳԻ ԱՐՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԸ ԵՒ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԸ

Մարդկային սպիտակ ցեղի երկիրները 63 միլիոն 880,000 կով ունին, որոնք կարապրեն տարեկան 2,640,000 տակառաչափ ( մէկ տակառաչափը 1,000 Բիլոկրամէ ) կտրագու պանիր, որ ըսելէ 9,407,500,000 Ֆրանքի գումար մը :

1899 հետեւեալ երկիրներու իւրաքանչիւրի ունեցած կովերու թիւը եւ անոնց արտադրութեան քանակը.

	Կովերու թիւը	Արտադրութիւն տակառաչափով(1000ֆիլո)
Միացեալ Թագաւորութիւն	3,950,000	200,000
Ֆրանսա	5,000 «	200 «
Գերմանիա	8,950 «	300 «
Րուսիա	10,000 «	350 «
Աւստրիա	6,000 «	170 «
Իտալիա	2,400 «	145 «
Սպանիա եւ Փորթուգալ	1,200 «	50 «
Շուէա Նորվեգիա	2,300 «	80 «
Տանիմարքա	1,050 «	60 «
Հոլանտա	900 «	120 «
Պէլճիզա	800 «	60 «
Ջուրճերիա	500 «	70 «
Րումանիա	1,200 «	20 «
Սերպիա	300 «	10 «
Թուրքիա	300 «	10 «
Գումար. Եւրոպա	44,850,000	1,835,000
Միացեալ Նահանգ	15,940 «	610 «
Քանաա	1,999 «	130 «
Աւստրալիա	1,100 «	55 «
Գումար	63,800,000	2,640,000

Միացեալ Թագաւորութեան արտադրած տարեկան կարգի եւ պանիրի քանակութիւնը այսպէս կը բաժնուի.

Մեծն Բրիտանիա	140,000	տակառաչափ
Իրլանտա	60,000	«

1899ին Անգլիա 1889ի վրայ 90 000 տակառաչափ աւելի արտադրած է, ըսելէ գրեթէ կրկնած է, միմիայն 550 000 կով աւելցնելով :

Հիմա Անգլիական կովը կուտայ տարին միջին հաշուով 400 կալօն (1816 լիգրը) զուտ կաթ կամ ամբողջ երկիրը 1,580 միլիօն կալօն, որուն 450 միլիօնը կը գործածուին կարագագործութեան, 140 լիվրի (63 քիլո 1/2) հաշուով 440 կալօնի համար, 680 միլիօնով պանիր կը շինեն կամ կը խմեն, 450 միլիօնով ալ հորթերը կը սնուցանին:

Ճրանտան թէև կարտադրէ Միացեալ թագաւորութեան չափ կարագ և պանիր, սակայն աւելի շատ թւով կովերով և աւելի մեծ ծախսով:

Միակ երկիրը Տանիմարքան է, որ իր երկրի տարածութեան և բնակչութեան համեմատութեամբ՝ Չուիցերիայէն նուազ ծախսով՝ ամենէն շատ կարագը կարտադրէ: Տասը տարուան մէջ այս երկրի արագորութիւնը գրեթէ կրկնապակուած է ինչպէս Պէլժիգայինը, մինչդեռ Իտալիայինը գրեթէ եռապատկած է:

Ճերմակ ցեղի բնակած երկրներու ընդհանուր արտադրութիւնը 1889—1899ը մօտաւորապէս 100,000 տակառաչափ աւելցած է:

Գալով սպառման, արտադրութիւնէն աւելի եղած է. միեւնոյն երկիրները միեւնոյն ժամանակամիջոցի մէջ 822 հազար տակառաչափ աւելի սպառած են:

	Սպառում տակառաչափով	Սպառում մտրդ գրուիս
Միացեալ թագաւորութիւն	510 հազար	28
Ճրանտա	270 «	16
Գերմանիա	440 «	10
Րուսիա	345 «	7
Աւստրիա	170 «	9
Իտալիա	85 «	6
Սպանիա և Փորթուկալ	50 «	6
Շուէս Նորվեկիա	55 «	18
Տանիմարքա	20 «	20
Հոլանտա	20 «	10
Պէլժիգա	65 «	23
Չուիցերիա	30 «	22
Րումանիա	30 «	22
Թուրքիա	.. :	..
<b>Գումար Եւրոպա.</b>	<b>2,060,000</b>	<b>13</b>
Միացեալ Նահանք	580 «	28
Բանատա	50 «	22
Աւստրալիա	50 «	24
<b>Գումար</b>	<b>2,740,000</b>	<b>15</b>

Միացեալ թագաւորութեան սպառումը 1899ին այսպէս եղած է .

Մեծն Բրիտանիա 480 հազար տակառաչափ  
Իրլանտա 30 «

սպառած են :

Մարդ գլուխ սպառման մէջ Անգլիան առաջին տեղը կը բռնէ . նոյն իսկ Իռլանտան մէկ գի թողլով, Էւրաքանջիւր անգլիացի 30 անգլիական լիւրաէ(13 քիլօ 60) աւելի կը սպասէ, ըսելէ Ֆրանսայի եւ Գերմանիոյ կրկինը :

1850 ին եռապատիկ սպառում ունէին Անգլիացիք : 1870 էն իվեր կրկին :

1886—1899ը Ֆրանսայի, Գերմանիոյ եւ Զուեցերիոյ մէջ սպառումը կրկնապատկած է :

Ընդհանրապէս Տանիմարքայի, Միացեալ Նահանգներու եւ Հոլլանտայի մէջ պակասած է :

Ամբողջ քաղաքակիրթ աշխարհի մէջ, 1886 — 1899ը սպառումը բարձրացած է մարդ գլուխ 11—15 անգլիական լիւրա կամ 4 քիլօ 987—6 քիլօ 800 կրամ :

Միացեալ թագաւորութիւնը (անգլիա) մեծ քանակութեամբ կարագ կը ներածէ :

Տարի	Տակառաչափ
1860	37 հազար
1870	52 «
1880	104 «
1889	136 «
1892	190 450
1898	160 450
1890	169 150
1900	169 000

Տանիմարքան երկիրն է . ուր ամենէն շատ կարագը կուտայ անգլիոյ . 1900 ին զրկածէ 1,486,342 կենդինար (աւելի քան 75 միլիօն քիլօ կրամ) ներմուծման 3,378,516 կենտինարի ընդհանուր թուի մը վրայ, ըսելէ մօտաւորապէս 40 առ 100ը, մինչդեռ 1892 ին զրկած էր միայն 863 522 կինդինար :

Վերջը կուդայ Ֆրանսան, ըսոյց համեստ համեմատութիւնով մը որը երթալով երթալով ալ կը նուաղի . 1892ին զրկած էր 542,697 կենդինար, մինչդեռ 1900 ին ինկած է 322,048 կենդինարի :

Յոյց առինք կաթնեղէնի առեւտուրի ասպարէզին ընդարձակութիւնը ճշգրիտ եւ վիճակագրական թուերով ուրկէ օգտուելը եւ շահելը ընթերցողին ձեռքն է :



# ՄԵՂՈՒԱԲՈՒԾԱԿԱՆ

## ՏԿԱՐ ՓԵԹԱԿՆԵՐԸ

Միշտ կրնայ պատահիլ, որ յետամնաց պարտեր ըլլան եւ որոնք նոր փեթակներ կը կազմեն, ասոնք ուշ մնացած եւ մինչեւ ձմեռ եղած ժամանակամիջոցն ալ կարճ ըլլալով բնական է ժամանակ չեն ունենար իրենց ձմրան պաշարը ամբարելու :

Այս յետամնաց պարտերը, եթէ իրենց գլխուն ձգուին, քիչ մը պաշարը (մեղրը) կարճ ժամանակէն պիտի սպառեն առանց օգտի եւ իրենք ալ վերջապէս պիտի մեռնին անօթութենէ :

Այս մեղուներէ շատերը մեռած ասեմներն, իրենց փեթակի ծակին առջեւ կիյնին, ուր իրենց մարմինը կը մգլի, կը հոտի եւ կը թռուաւորէ միուսները. ոմանք կը մեռնին մեղրախորիսներու (տալախ) միջեւ, ոմանք ալ գլուխնին առէջներու մէջ կոխած կը փայտանան, այնպէս որ, յառաջիկայ տարին եթէ նոյն փեթակին մէջ նոր պարտեր գրուին մեղուները մաքրելու աշխատելով իզուր ժամանակ պիտի կորսնցնեն :

Նոյն իսկ ուշ ասեմ կարելի է այս տկար փեթակներու մեղուները փրկել, կտրելի է ասանք միացնել ուժով եւ առատ մեղր ունեցող փեթակներու :

Երկու անվիճելի առաւելութիւն ունի այս միացումը :  
Նախ՝ Գօնաարտի սա առածը կերպործուի թէ՛ Աղիկ մեղրաբառժի բոլոր հետաքրքիր կը կաշանայ ոյժով փերակներ ունենալուն մեջ :

Երկրորդ՝ մահուան դատապարտուած այս մեղուները կը փրկուին, առանց մասնաւոր զոհողութեան եւ ծախսի, քանի որ բազմաթիւ մեղր ունեցող փեթակ մը սակաւաթիւէ մը աւելի մեղր չի ուտեր ձմեռը : Շատ գիւրբուն կը հասկցուի այս ձմեռ ատեն մեղուները կը սպառեն իրենց ամբարածը աւելի փեթակներու բարեխառնութիւնը (տաքութիւն) բարձրացնելու՝ քան իրենց գոյութիւնը պահպանելու համար :

հետեւաբար, քանի ցուրտ ըլլայ, մեղուները աւելի շատ մեղր պիտի ծծեն իրենց փեթակի ներսի պէտք եղած տաքութիւնը արտադրելու համար:

Բայց եթէ մեղուներու թիւը շատ ըլլայ իւրաքանչիւրը նուազ մեղրը պիտի ծծէ պէտք եղած տաքութիւնը արտադրելու համար:

Սենեակի մը մէջ՝ որքան շատ ըլլան տաքցնող վառարաններու թիւը, իւրաքանչիւրին մէջ քիչ ածուխ գրուելով կը ասքնայ կոորը:


Ոյժով փեթակ մը տկարէն դերագոյն ասուելութիւններ ունի:

Երբ 15,000 մեղուներու դաղթականութիւն մը 3 քիլօ մեղր կը հաւաքէ, 30 000 ի դաղթականութիւն մը միեւնոյն պայմաններու մէջ փոխանակ 6 քիլօի 9 քիլօ կը հաւաքէ՝ ըսելէ եռապատիկը:

Վերջապէս այս միացումով առաջին տարին կը խնայուի ամբարուած մեղրը, երկրորդին ալ արտադրութեան քանակութիւնը կ'աւելնայ:

Արդարեւ՝ բոլոր մեղուները կապրին, եւ կրնան մեծցնել բազմաթիւ սերունդ մը յառաջիկայ եղանակին համար, եւ այն ստեն կրնան քաղել ո'չ միայն իրենց տարեկան սնունդը, այլ այնքան աւելի շատ, ուրիշ մեղուաբուծը կը ստանայ իր աշխատութեան վարձքը:


Այնպէս որ, կարժէ զբաղուիլ տկար փեթակներով եւ չի թողուլ, որ կարեւոր շահ մը անհոգութեամբ կորսուի:



ՄԱՄԼՈՅ ՏԱԿ Է

Գ. Մեծատուրեանի կարևորների Հնչրուքիւն պատկերազարդ գրքոյկը.

Հրատարակութիւն Պ. Արամեանցի, Բետրսպուրկ.



## ՇԱՏ ԾԵՐ ԿՈՎԵՐԸ

Ուրիշ զիտութեանց հետ կենդանեաց տնտեսութիւնը շատ աարիներէ իվեր զգալի յառաջգիտութիւններ ըրածէ։ Անոր մեզի սորվեցուցած սկզբունքներու համաձայն պիտի ուսումնասիրենք շատ ծեր կովերը պահելու անպատեհութիւններն ու փեսաները։

Ընդհանրապէս կը պահեն այն ծեր կովերը, որոնք քիչ շատ առատ կաթ կուտան, հեզարարոյն եւ տեսքով գեղեցիկ, այս սովորութիւնը երկրագործի շահուն բոլորովին հակառակ է, որովհետեւ տասը տարիքը անցնող կովերու 100 ին 25 ը թոքախտաւոր կըլլան։

Կը վարակեն նախ իրենց գրացիները, յետոյ իրենց յաջորդներուն կուտան թոքախտի սերմերը, որով այս վտանգաւոր ախտը տեսակմը փառանգութիւն կը դառնայ իրենց սերունդին։


Ծերութեան հասակի մէջ իրենց տուած կաթի բորակածնային, ճարպային եւ շաքարային նիւթերու քանակութիւնը կը նուազի, մինչդեռ կրային աղերունը եւ ջուրինը կաւելնայ։

Այս կաթը, եթէ չեռացուցած խմուի, փեստակար կըլլայ փոքրիկ սոցոց եւ ընդհանրապէս բոլոր սպառողներու, որովհետեւ կրնայ անոնց տալ ծանր հիւանդութեանց սերմեր։

Փոխանակ երկար տառն պահելու ծեր կով մը եւ անկէ 8—20 հորթ առնելու, աղէկ հողագործը, հինգերորդ հորթը առնելէ ետքը, գրեթէ եօթը տարեկան եղած տառն, պէտքէ հեռացնել մասածէ, մանաւանդ որ այդ միջոցին կրնայ այն կենդանիներէն ստանալ աւելի մեծ քանակութեամբ եւ առաջին կարգի միս, վտանգի այս տարիքին մէջ կրնան ստացած աննունգնին լաւ մարսել եւ իւրացնել, որով աւելի խնայողական կերպով կը գերնան։

Հողագործի շահը եւ հասարակութեան օգուտը կը պահանջեն, որ այս խնդիրի մէջ բարեփոխութիւններ մտցուին։

Ամեն մարդ գիտէ, արգէն կենդանին կուտէ առանց գիրնալու, այնպէս որ՝ երբ մորթուի իր ծանրութիւնը եւ մօի ահտակը ոչինչ արժէք մը կը ներկայացունեն։



## ԻԺԸ (02) ԵՒ ՈՋՆԻՆ

Հետաքրքրութեամբ դիտուած է շատ անգամ թէ քնու-  
թեան թէ մասնաւորաբար կենդանիներ գրուած վանդակ-  
ներու մէջ Ոզնիի եւ Իժի մենամարտը :

Երկու թշնամիները իրար կը ճանչնան եւ անվստա-  
հութեամբ կը վերաբերին մէկ մէկու դէմ: Ոզնին կլոր-  
ուելու միշտ պատրաստ կը մնայ, իսկ Իժն ալ անոր ամեն  
մէկ շարժումը կը գիտէ: Բայց վերջապէս յողնելով իր  
գիրքը կը փոխէ եւ իրեն յատուկ դանդաղ գնացքովը կը  
սողայ:

Ոզնին յարմար ժամանակէն կօզտուի, արագօրէն կը  
վազէ իժին հասէն, կը խածնէ ակօսաներովը պոչը եւ խսկոյն  
կը կլորնայ դունդի մը ձեւը կառնէ:

Բնագգամբ ոյժով չի սեղմեր ակօսաները չի կտրելու-  
համար իր թշնամիի պոչը:

Իժը կառգած՝ փշոտ գունդին վրայ կը յարձակի կը  
խածնէ եւ ակօսաներովը կը սեղմէ փուշերը. ցատկելով  
ցաթկառելովը հետը կը քաշքշէ ոզնին, որ կը հետեւի  
անշարժ կերպով. վերջապէս ոզնիի փուշերէն բազմաթիւ  
վերքեր ստանալով կընկճուի եւ կը մեռնի: Միշտ գիտուած  
է որ, ոզնին կը սպասէ իժի վերջին հոգեվարքի շար-  
ժումներու գաղբիւրն եւ այնուհետեւ կուտէ իր վոճը,  
սկսելով պոչէն եւ միշտ ակօսաներու միջիւ պահելով:

Կը կարծեն ընդհանրապէս թէ՛ ոզնին չապրիր միայն  
միջատներով, որդերով եւ թուլամորթերով, կուտէ նաեւ  
թռչուններու ձուեր, պղախի թռչուններ եւ վանազան  
պտուղներ, ուրեմն իբրեւ վնասակար կենդանի գատապար-  
աուած է:

Վերսայլի մօտերը պարտեզի մը մէջ երկու ոզնի կը  
գրուին իրենց ձագերով. շուտով կընտելանան, նոյն իսկ  
իրենց տրուած կաթը առանց վախի կը խմեն:

Պարտեզին մէջ վնասացող խխունջները եւ վնասակար  
որդերը կուտեն կը սրբեն, անանկ որ, դարնան հաս մ՝ իսկ

կարելի չըլլար գտնել, սակայն ողնիներու այդ ընտանիքը կամաց կամաց կըսկսի ուսուլ քուսած կանանչները եւ ելակները :

Անհամար օգուտներ պիտի կրնար տալ ողնին հողագործութեան՝ մանաւանդ կանանչեղէններու եւ բանջարեղէններու մշակութեան, եթէ միեւնոյն սահն մտակեր եւ բուսակեր չըլլար :

## ՀՈՂԱԳՈՐԾԻ

### ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԴԵՂԱՐԱՆԸ

Կրացրած պաղլեղ. (չապ) (alun calciné) Այս դեղը կը գործածուի փոչիացած կամ դինիի մէջ լուծուած, հին վերքեր չորցնելու եւ գոցելու :

Անուշադր (նիշէտիր թուզու). — Որոճացող կենդանիները, երբ ՓՔԱՆԱՆ (այս հիւանդութիւնը առաջ կուգայ պարկճաւոր (legumineux) տունկերուն կենդանեաց ստամոքսին մէջ խմորուելէն եւ անկէ գոյացած ածխաթթու կազի մեծ քանակութենէն սրով, կենդանին կուռի. անուշադրը կրնայ գործածուիլ, սրովհետեւ կազերը խտացնելու մասնաւոր յատկութիւնը ունի. Բայց տալէ առաջ պէտք է խնամով խառնուրդ մը ընել, որպէսզի հիւանդին բերանը չ'սայրի՝

Չուրի խառնուած կը տրուի ,

Եզի եւ կովի

12—20 Կրաւ

Ոչխարի եւ այծի

2—5 «

Կարելի է քացախի խառնած ալ տալ ասանկ պատրաստուածը, որ ոչ անուշադրի, ոչ ալ քացախի հոտը կուեննայ :

Դգալ մը անուշադրը խառնելով՝ երկու դգալ ձէթի կրնայ ծառայել կովի եւ այծի ծծկրուն ուռեցքին դէմ, հիւանդ գործարանը այս խառնուրդին մէջ թաթխած աստուեղէնի (մանեղա) կտորով մը պէտքէ չփել :

Նոզի խղ. - Հողագործը այս իւզէն ունենալու է, օձաճակ ( մէհլամ ) շինելու համար. բայց խնամքով պահելու է, որ չի կծուանայ:

Ալքոլ (իւպիրիթօ). — Ալքոլ եթէ շքլւայ՝ օդին ալ կրնայ գործածուիլ:

Ներսէն տալու համար օդին նախամեծարելու է, որ կը արուի ազաքինածներու:

Մեծ կենդանիներու	150—300	Կրակ
Միջակներու	50—100	«
Փոքրերու	20—50	«

Հալուէ (էօս ազածը). — Իրր բնաիր լուծողական կը արուի հետեւեալ քանակով.

Մեծ սրածայտղներու	50—75	Կրակ
Չիու	25—50	«
Ոչխարի	25—30	«
Նոզի	5—16	«
Շան	2—5	«

Կը պատրաստուի հալուէի փոշին մեղրի կամ հաւկիթի գեղնուցի խառնելով, լեզուութիւնը զգալ չի աալու համար կրնայ արուիլ իբր գեղհաս (հապ):

Բնականգրուկ (benzine). — Շատ լաւ հեղուկ մ'է այս բոլոր կենդանիներու ոջիւնները սպաննելու գէմ. Բաւէ գեղել մակաբուժի գանուած տեղերը:

Չիու քոսին գէմ ալ լաւագոյն գեղ մ'է բնականգրուկը: այս պարպային, կը գեղուի, 25—36 հ սրիւրամէթր երկս մը առաջին անգամ եւ ամեն օր յաջորդաբար, որովհետեւ գրգռող մէ հեղուկը:

(Acide pierique). Աւելի ազգուէ քան ասիա ֆէնիքը իբր հակահեխական, սրով կրնան խնամուիլ վրանդաւոր վերքերը. այրուածքէ առաջ եկած ցաւերն ալ իսկոյն կը հանդարտեցնէ.

Վերքերը պէտքէ խնամել սա գեղածեւով.

Ասիա բիքրիք	5	Կրակ
Ալքոոլ	100	«
Ջուր	1000	«

Իսկ այրուածքի գէմ պէտքէ լուծել 10—15 մաս ասիա բիքրիքը 100 մասջուրի մէջ:

## ՓՇՐԱՆՔՆԵՐ

### ԵՂԻՃ ԿԱՄ ԿՃԱՆ ԽՈՏ

Կաթնտու կովերը եւ խոզերը շատ կը սիրեն եղիճը, կուտան եթէ կտրուելէն ետքը քանի մը ժամ անցնի, որովհետեւ այն ատեն կը կորսնցնէ իր կճող յատկութիւնը:

Ըստ Ռօօլֆի կը ներկայացնենք չորցուած եւ խարի վերածուած եղիճի բաղադրութիւնը, մարգերէ հնձուած չոր խոտիւնին հետ, ցոյց տալու համար սննդական արժէքի տարբերութիւնը:

	Չորխոտ	Եղիճ
Ջուր	14 %	15 %
Բորակածնային նիւթեր	9 "	18 "
Պարարտ	2 "	7.7 "
Ոչ բորակածնային	40 "	38 "
Խորշանիւթ	29 "	10.5 "
Մոխիր	5.5 "	14 "

Ինչպէս կը տեսնուի եղիճը սննդարար տարրերով աւելի առատ եւ հարուստ է:

Եղիճը կանանչ եղած ատեն կը պարունակէ 85% ջուր:

\*—

### ՊՏՈՒՂՆԵՐԸ Ա.ՁՍ.ՏԵԼ ՊԻՇԱԿՆԵՐԷՆ

Թարմ լոլիկի (տոմազէս) տերեւները պիծակները, իչամեղունները եւ ձիամեղունները հեռացնելու մասնաւոր յատկութիւն մը ունին:

Եթէ այգիներու մէջ, որթատունկի կարգերու միջեւ տեղ տեղ լոլիկի տունկեր ըլլան պիծակները ալ չեն գար ուտել խաղողի ողկոյզները:

ԱՇԽԱՐՀԻ ՈՉԽԱՐԻ ԹԻԻԸ

Աւստրալիա ունի	92	միլիոն	ոչխար
Եւրոպա	165	«	«
Ասիա	53	«	«
Ափրիկէ	13	« եւ 5 հարիւր հազար	
Միացեալ Նահանգներ	32	«	ոչխար
Քանադա	3	« եւ 5 հարիւր հազար	
Ս. Թանդին	80	«	ոչխար
Հարաւային ամերիկայի միւս երկիրները	40	«	
Ընդհանուր Գումար	490, 000, (100)		

ՀԱՅԻ ԵՒ ՄՍԻ ՍՊԱՌՈՒՄԸ

Ձանազան ազգերու տարեկան սպառած հացի եւ մսի քանակութիւնը .

Բուսը	կուտէ տարեկան	317	քիլո	հաց
Գերմանացին	«	«	280	«
Ֆրանսացին	«	«	270	«
Սպանիացին	«	«	240	«
Իտալացին	«	«	200	«
Անգլիացին	«	«	190	«

Գալով մսին .

Մեծն Բրիտանացին	կուտէ տարեկան	34	քիլո	միս
Ֆրանսացին	«	«	31	«
Զուիցերիացին	«	«	19	«
Բուսը	«	«	18	«
Պէլժիքացին	«	«	16	«
Հոլանտացին	«	«	15	«
Աւստր - Հունգար.	«	«	14	«
Տանիմարացին	«	«	14	«
Շուէտնորվեկիացին	«	«	13	«
Սպանիացին	«	«	13	«
Իտալացին	«	«	10	«